



ԱՐԾՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՆՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՅԻՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԾՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱՅՈՒ
ՄԿՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԻՄՆԱՆ

1862 Թ. 7.

ՀԱՅՐԻ ՉՈՐՈՐԻ 2

ՈՅԺԱ

ՎԱՆՏՈՒԳ

ԻՏՊԱՐԱՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՆՅՆ
Ի ՎԱՐԱԳ

THE UNIVERSITY OF CHICAGO
PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
530 N. Dearborn Avenue, Chicago, Ill. 60610

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
530 N. Dearborn Avenue, Chicago, Ill. 60610

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
530 N. Dearborn Avenue, Chicago, Ill. 60610

ցինն ալ շինականն ալ , հարուստն ալ , աղքատն ալ առ հաւ
ստրակ ի միասին . « Հայք ոչ միաբանին . Հայոց սիրտը իւ
րարմէ հեռու է . Հայոց հոգին տառնձին էակմբն է ընկե
րական չէ . Հայոց միտքը իւր անձնէն դուրս չելներ . անձոյ
եւ կոշտ մետաղներուն կ'նմանի . կուգես հազար անգամ
հալէ , թափէ . միաձոյլ անօթ մի շինելու յոյս չիկայ » :

Չեմ գիտեր ասոնք առած են , եթէ անբժշկելի հարու
ւած են . որոնց ամէն մէկ բառերը գիտես թէ յուսահա
տուծեան ահագին շանթիւ կարծակին Հայոց լեռներուն
ու դաշտերուն վերայ եւ միանգամայն միութեան եւ ըն
կերական սրտերու բողբոջները կ'խամբեն կանաչադարդ
դալարութենէն : Եւ գուցէ Հայոց յառաջագիմութեան
ձունկերը թուլացուցանող կամ քայլերուն արգելք եղող
այդ յուսաբեկ առածներուն խոչնդոտ մեծ մեծ քարերն
են : Վասն զի յուսահատութիւն յառաջ չեքլմար , յուսա
հատութիւնը՝ սրտի արիականութեան մասին մահաբեր ժան
տախտն է . ուրեմն յուսահատը մարդկային ընկերութեան
համար կենդանի չէ . մեռեալ անդամ մի է նորա համար
կամ չուան պէտք է , որ կախուի . կամ ծով պէտք է որ
խեղդուի . կամ Եւրոպոյ քաղաքամիջի գետեր պէտք են
որ ինքը գինք մէջ ձգէ . . . :

Բայց մի թէ չորս հաղարամեայ Հայաստանին համար է
այդ օրինակ յուսահատութիւնը , որով իւր ազգային կեն
դանութիւնը պարտաւելի անձնասպանութեամբ աշխարհէս
վերջացնէ . ոչ , քան , այս մի լիցի . Հայաստանը ոչ ինչ ժա
մանակը իւր այնչափ դառնադառն վիճակներու մէջ եր
բէք այդպիսի եղբանագործութիւն չի մտածեց . Հայաս
տանը մշտնջենաւոր անմահ է իւր վշտահամբեր առաքինու
թեամբ : Այդ Հայաստանի սիրտ հարկանող առածներու

Թիւն կամ տգիտութեան կուրուծիւնը խկապէս պատ-
 ճառ եղան հայրենեաց թշուառութեան, որուն մէջ տես-
 նուեցաւ Հայկազանց Թագին գլորումն, զաւազանին խոր-
 տակումն, մեծամեծ նախարարութեանց բաժանումն. եւ
 վերջապէս աւերումն եւ սպառումն հայրենի բոլոր բարե-
 մասնութեանը. հապա Հայոց անմիաբանութեան բուն
 պատճառն ի՞նչ է. դարձեալ յիշենք այդ մեր փիլիսոփայից
 Ճշգրիտ վճիռը. « Հայոց անմիաբանութեան պատճառը
 կոյր տգիտութիւնն է. տգիտութեանն ալ իւր անիմաստա-
 սէր բարբը. բարուցն ալ՝ իսկզբանէ անտի դաստիարակու-
 Թիւն չը սիրել » : Ահա սոյն հիմնական պատճառներէն
 յառաջ եկած է եւ դեռ կ'շարունակէ մեր ազգային ան-
 միաբանութիւնը : Եթէ կուգինք եւ փափաքելի է բոլոր
 Հայկազանց սրտին, անմիաբանութեան հոգին որչափ կա-
 րելի է Հայաստանէն դուրս հալածել. ձեռք զարնենք ան-
 համաձայն գաղափարները միացնելու : Դիւրին չէ այս
 ձեռնարկութիւնը, մեծ սքանչելիք, մեծ զօրութիւն, մեծ
 վաստակ պէտք է. զոր Յիսուս միայն կարողացաւ աշխար-
 հիս բազմաստուածութեան գաղափարները Աւետարանին
 քուրայով միաձոյլ թափել եւ զանազան ազգաց անհամե-
 մատ զանգուածներէն մի եկեղեցի կազմել : Ուստի ընդ հա-
 նուր մարդկային գաղափարները միացնելու ձուլարան մի-
 միայն Քրիստոնէութեան հոգին է. եւ այս հոգին մեր
 Հայաստանը 1800 այսչափ տարիէ ի վեր ընդուններ է. բա-
 ւական չէ՞ արդեօք, գաղափարները ինչո՞ւ չեն միանար :
 Այո՛ բաւական է. միայն դաստիարակութիւն կ'պակսի. վասն
 զի մարդկային մտաց գաղափարները կորդ ու ապառաժ
 գետնի կ'նմանին, քանի որ դաստիարակութեամբ մշակու-
 ւած չէ : Յիրաւի Քրիստոնէութեան ոգւոյն սերմը կըն-

տան քուրային մէջ երկնային հրով նոր հալեց ու թափեց ի միաբանութիւն սիրոյ : Ահաւասակ այս նորահրաշ դաստիարակութեան շնորհքն էր , որով զաշխարհ ամենայն կարողացան իբրեւ գերագոյն վարժապետ դաստիարակել : Խօսքը իւր բնական կարգէն դուրս ելաւ . վերադառնալով վերստին :

Հայկազանց անհամաձայն գաղափարները միացնելու համար շատ վերնատուն պէտք է . վերնատան համար ալ բաղմամբիւ դաստիարակները , բնորդ ու բարի դաստիարակներ հանելու համար դարձեալ վերնատուն պէտք է : Եթէ ուրիշ զօրաւոր միջոց մի գիտես , խօսիր հանձարաւ միտ ընթերցող , դպրոցին վերնատունէն ի դատ այլ ի՞նչ տեղ կայ . ուր հնար է գաղափարները նոր թափել ու միացընել : Այս դարուս մէջ կարծեմ թէ միմեայն դպրոցն է սքանչելի ձուլարան մարդկային մտաց ու սրտին : Հին աշխարհի մէջ ի՞նչ էր արդեօք , որ մարդիկներուն գաղափարը կը միացներ . ուրիշ բան չէր՝ այլ միայն բռնակալութիւն , զէնք , պատերազմական դաշտը , ալքոհի հրովարտակներուն անդարձ վճիռները . որով և հասկցուի , թէ հին աշխարհի դաստիարակը երկիւղն էր միայն , որ իւր բռնաւոր դաւադանին տակը գտնելով դանելով մարդկային ազատ մտքեր կը ճնշէր եւ և միացնէր :

Բարիլոնեան դաշտին մէջը իշաւ Աստուածը եւ այն չար միաբանութեան միաձոյլ գաղափարը փշրեց ու կտոր կտոր բաժնեց . բռնաւոր Բէլը այս բաղմալեզու գաղափարները դարձեալ միացոյց . միայն մէկ ազատասէր Նահապետի մի անդամանդ հոգին չի կրցաւ ձուլել կամ միացնել իւր բռնակալութեան երկաթին հետը : Նոյնպէս նա եւ Նաբուգոդոնոսորին ահարկու հրամանը սղգ եւ աղմբ կը

խոնարհեցնէ իւր ոսկեճոյլ պատկերին առաջը. միայն Աստուծոյ առաջապատութեան ծնունդ երեք մանկունքները չեն խոնարհիր. բռնաւորին հրամանը հնոց կ'վառէ, որպէս զի երկոց մանկանց անդամանդեայ սիրտը հնոցի քուրայի մէջ հալելով՝ միացնէ Տէրայ աշխարհին բազմութեան դադարները հետը :

Բաւական կ'համոզեն զմեզ այս օինակաները, թէ հին աշխարհի դադարները ձուլարան ամէնէն աւելի բռնակալութեան ահագին մեքենան էր : Բայց նոր աշխարհի մէջը այս մեքենան ալ չի բաներ. ասոր տեղը դպրոց, դաստիարակութիւնը եւ մարդկային ազատ իրաւունքներն են : Այս միջոցներով միայն հնարաւոր է անհամաձայն կարծիքները հալել ու միակտուր անօթ մի շինել : Հասարակաց առածը կը դժուարացնէ այս միջոցը. «Որչափ մաքրիկ այնչափ կարծիք» կ'է. սակայն կ'թուի մեզ թէ այս կարծիքը աւելի այն դաս մարդիկներուն կ'յարմարի, որոնք ճշմարիտ դաստիարակութեան զօրէ քուրային մէջ երբէք չեն անցեր կամ թէ անցեր են ալ անօգուտ. վասն զի շատ անգամ դաստիարակութեան ջանքը ի դերեւ կ'ելլէ. բնածին չարութեամբ կապար եղած նիւթը; դաստիարակութեամբ ոսկի դարձունել հրաշք պէտք է : Բարսեղի Պեարայուցոյն հետը Յուլիանոսն ալ աշակերտակից էր Նիւթեանի դպրոցին մէջը : Ուսումն եւ դաստիարակութիւնը զմէկն ոսկիարձան թափելով կ'անկէ աշխարհի առաջը. իսկ միւսն թէպէտ եւ կը հաւրի, բայց իրդեւ անարդ. կապար իւր նիւթը մարդկային ընկերութեան համար մահաբեր զնդակ է : Ընդհանուր մարդկութեան կենդանի մեռաղը բոլորն ալ ոսկի փոխարկել դաստիարակութեան քիմիական արհեստով՝ անհնարին ջանքէ :

Իսկ մեր Հայկազանց ցնդեալ ու ցրուեալ գաղափարս
ները. կամ Բաբելոնեան խառնակութեամբ իրարմէ բաժա-
նուած լեզուները ու անհամաձայն միտքերը դարձեալ ի
միութիւն ժողովել՝ անհնարին չէ. այլ ջանք եւ յոյս պա-
կաս է : Արդարեւ Հայաստանին այժմեան վիճակը՝ իբրեւ
ողբալի տեսարան մի կբացուի հայրենասէր աչքին զիմաց
երբ կնկատէ նորա մէջ ազգային մարմնոյն անդամները
բուն հայրենեաց կեդրոնական միութենէն բաժնուելով՝
զանազան աշխարհներու մէջ կբնակին . այլ եւ այլ տէրու-
թեանց հպատակելով՝ գիտես թէ կարծիքներն ալ աւելի
տաշաճայն եղած է : Գաղթական Հայկազանց կարծիքը
միաձոյլ թափելու համար բաւական կակուղ մետաղ մի
դարձած է կրթութեան ձեռքով՝ բայց բնիկ հայրենեաց
Հայերուն կարծիքը՝ դեռ նախնի խտուրթեան մէջ կզա-
ռածանին եւ շատ տարբեր են իրարմէ : Վանեցիին ուրիշ,
Աարնեցիին ուրիշ, Մշեցիին ուրիշ, Տիգրանակերտցիին ուրիշ,
Անաստայի ուրիշ, Ալիլիկեցիին ուրիշ, Աբաստացիին ուրիշ, Պոն-
տոսեցիին ուրիշ, քաղաքացիին ուրիշ, գեղացիին ուրիշ, իշխա-
նաւորն ուրիշ, արհեստաւորն ուրիշ. որչափ դժուարին խըն-
դիք է այսչափ հեռաւոր կարծեաց գաղափարները բերել
միատեղ, եւ միաձոյլ ազգութեան արձան մի թափել :
Ասոյց համար կամ հրաշք պէտք է կամ գերմարդկային հը-
րաշափորձ ձեռքը. այսինքն Գրիգորն իւր խաչով Տոդառն
իւր սուրով :

Այո՛ գաղափարաց միութեան համար իշխանութեան
ձեռքը՝ զօրաւոր միջոց է . այս երջանիկ բախըը Հայաստա-
նէն վաղուց հետէ երես դարձունելով՝ խռովելու ու հեռա-
ցեր է . կհաշտուի դարձեալ թէ որ ճշմարիտ լուսաւորու-
թեան պատգամաւորութիւն միջնորդէ : Բայց միթէ եկե-

դեցին եւ դաստիարակութիւն բաւական չեն . այն բաւական են եւ առաւել բաւական . Յակովբայ ազգին համար Աստուծոյ առաջնորդութիւն մեծ ու քաղցր է . քան Սաւուղի չարչարող իշխանութիւնը :

Ազգային զանազան կարծիքներով բաժանուած Ճիւղերը՝ դարձեալ միութեան արմատին վերայ պատուաստել՝ դաստիարակութեան արուեստին ձեռք պէտք է . նոյնպէս Հայկազանց անմիաբանութեան հոգին իրենց սրտէն կամ մարմինն հալածել Յիսուսի աշակերտներու նման նշանադրած աշակերտներ պէտք են . այսինքն Ներսէսներ , Իսահակները եւ Շնորհալիները . Նա եւ աւելի զօրաւոր ազդու միջոց են բնական փողերը . այն է սրտախօս քարոզիչ վարդապետներուն դասը . Ղեւոնդ եւ Վարդան Արտազուն դաշտին մէջ ձայն ձայնի տուած վաթսուհազարեան գնդին հոգիները ի միութիւն եւ ի սէր հայրենեաց կրվաւեն : Ուսումն եւ դաստիարակութիւնը մանկութեան հասակի դալար ճիւղերը հազիւ կարող են շտկել . իսկ եւ ռանգուն ատենաբանի մի սիրախօս Աստուածային պատգամները ամէն հոգիներ կ'գրաւէ . շատ անգամ յամառ կարծիքներ կ'փոխէ եւ նախապաշարեալ պինդ գլուխներն անգամ նորա առաջ կ'կակղին եւ կ'խոնարհին հաւանութիւն : Թեպէտ եւ իւր զօրութիւնը տեւողական ու մշտնջենաւոր չէ , ականջէն կ'մտնայ եւ մտքէն կ'թռչի շուտ . Բայց եւ յաճախ իւր զօրութիւն կ'ներգործէ . Թէ որ բեմին վերայ կեցած առանց խնայուէ միշտ փողի նման անդադար գոչէ :

Սակայն մանկութեան ուսումն եւ դաստիարակութեան կրթութիւնը ազգի մի ցնդած դադափարները միացնելու համար աւելի զօրաւոր միջոց են . Այս տեղ յոգւոց հանելով կ'ողբայ Արծիւը մինչդեռ Սողոմոնին առակը իւր

Հայրենեաց վերայ և տեանայ « Ո՛հ , որոց թողեալ են զունս
 նուաճն մանկութեան » : Դաստիարակութեան Աստուածա-
 տիպ կնիքը՝ աւելի հեշտ ու դիւրին և դրոշմի մանկութեան
 սրտին վերայ ինչպէս կակուղ մոմի երեքը . երբ հասակն
 առած կիրքերով սառեցեալ սիրտը և մերժէ զանի խտա-
 գոյն դիմահարութեամբ : Շինականին պարզ խեղճը վար-
 ժապետ թող լինի մեզ , և մշակէ երկիրը մինչդեռ գարնան
 դուարթ օրերն են , և հերկէ գետին մինչդեռ փոխը ու
 կակուղ է եւ արօրը խոր և թափանցի . վասն զի տարածամ
 մշակութիւնը ապարդիւն և հանէ երկրագործին ձեռքը :
 Այս օրինակը ճիշդ նմանութիւն չունի մարդկեպէն անդա-
 տանին հետը , այո՛ բնութենէն աւելի լինչ սքանչելի օրինակ
 կայ մարդոյս բարոյականութեան համար :

Ուրեմն եթէ և փափագ ինք յամենայն սրտէ . որ Հայրեն-
 եաց երկրի անդաստանը՝ կամ պարտէզը բազմապատիկ պը-
 տուղներ տայ՝ իբրեւ իմաստուն երկրագործը հոգ տանինք
 աւելի գարնանապսակ մատաղ տունկերուն . որոց դաշար
 ճիւղերուն դադափարները շուտով և պատուաստին իրարու
 հետը ու և միանան : Ընդունայն եւ զուր տեղ չաշխատինք
 հաստացած ու պնդացած մեծամեծ ճիւղերը պատուա-
 տելու , որոնք մինչեւ գերեզմանին դուռ երբէք միանալ
 չունին նոր աշխահի ուսումնաճաղիկ մատաղ տունկերուն
 հետը . թե եւ ըլլաւ եղանակ աշխատիս կամ գրչի սուր տու-
 պարներով սպառնաս : Թող տուր զիրենք , կրճէ ու դատի-
 արակէ իրենցմէ ծնած նոր զաւակաց մատաղ սերունդներ
 ընթաց դոքա նորօրինակ դաստիարակութեամբ իրենց
 ծնողաց իրբեւ հայր հանդիսանան . վասն զի ճշմարիտ
 կրթութեան եւ դաստիարակութեան իրաւունքը իշխանու-
 թիւն ունի : Զարմանք չէ , աշխարհիս մէջը նա է մեծ

Եւ գերագոյն հայր, որ առաքինի է, նորա հասակն է կատարեալ ծերութիւն. որուն մանկական այտերը դատարարական տիպի սկզբներով ծաղկած են : Նորա համար է Սօղոմոնեան բարձրագոյն վճիռը « Կատարեալն խաղաղուն ելից ժամանակս երկայնս . կամ թէ . Ալիք՝ իմաստութիւն մարդոյ են » : Օրինակ կուզես ասոր համար, կարգա Սուրբ գրքին մէջ՝ Դանիէլին եւ զանազան Էսդրան իմա հաւատաւարտող զըրպարտիչ ծերերուն պատմութիւնը :

Առաքինութիւնը իշխան է ոչ ստրուկ է եւ ոչ կրտսեր, միշտ կիշխէ . թէ որդի է՝ հօր վերայ, թէ ծառայ է՝ տիրոջ վերայ, թէ Ժողովուրդ է՝ իշխանին վերայ, թէ կին է՝ իւր ամուսնոյն վերայ :


Այսպիսի իշխող առաքինեաց խումբը, ո՛հ, մեր հայրենեաց մէջ շատ նուազ է եւ ասոր համար դու մի զարմանար, փան զի առաքինութեան բազմութիւն որդիքներ կ'ընանին եւ կ'սնանին դատարարականութեան մօր ծոցին մէջ : Աւագ, դատարարականութեան մայր դեռ Հայաստանին մէջ բնակութիւն չի հաստատեց, դեռ ազահութիւնը, շահասիրութիւն, փառասիրութիւն, անիրաւութիւն, մանաւանդ խաւար տգիտութիւնը փոքրիկ պատապարան մի կ'սնային իրեն : Ալ ի՞նչ իրաւունք ունիս գանգատելու, կարեկից ընթերցող, թէ Հայկազունք միութիւն չունին . երբ միութեան ձուլարան չիկայ, ինչո՞ւ կ'ցաւիս թէ Հայկազանց անհատները իրենց անձնէն դուրս բան չեն մտածեր, կամ առանձին կապրին հայերը առանց ընկերական հոգւոյ . երբ դատարարական արգանդը զիրենք վերտօին չէ ծներ լուսաւորութեան աւազանին մէջ . աւագան մի՞ որ կարծեմ թէ մտքին ու կամոյց ուղտերը սրբելով՝ կատարեալ նոր իմն Բրիտանիայ կ'կազմէ եկեղեցւոյն համար : Ինչո՞ւ նա եւ

յուսահատաբար կխօսիս թէ Հայերը դժուարահալ մե-
տաղներու կ'նմանին. զիրենք նորէն հալել եւ միացնել ան-
հնարաւոր խնդիր մի է : Դիր մէկ անգամ գանոնք դպրո-
ցական դաստիարակութեան հալոցին մէջ , վառէ եւ ար-
ծարձէ ազգասիրական խնամոց կրակը . կ'առնանա դու թէ
ի՛նչպէս Հայու մետաղը ամէն ազգերու մետաղներէն ա-
ւելի դիւրահալ է եւ իւր ազնուական յատկութիւն մա-
քուր ոսկի է : Ո՛վ չի վկայեր Հայոց համար թէ ինքն աժե-
նայարմար ենթակայ է դաստիարակութեան . ո՛վ չի վկայեր
թէ իւր վսեմ ընդարձակ եւ սուր միտքը ամէն գիտու-
թեանց ու ճարտարութեանց ընդունակութիւն ունի . միայն
թէ բուժ եւ գուլ մնացեր է առանց գործածութեան .
սրել պէտք է զինքն դպրոցական յեսանով : Հայութիւնը
ընտիր եւ զարմանալի զանգուած մի է թէ եւ հազար հա-
զար մասն փսորուած ու բաժանուած է իւր այժմեան վի-
ճակը . բայց դու ժողովէ որչափ հնար է , լից զիրենք ալիւ-
րի նման դպրոցի տաշտին մէջ . հնարագէտ կնոջ օրինակէն
խրատ առնելով՝ խառնէ նորա մէջ գիտութեան խմորը ,
դաստիարակութեան ձեռքով շաղախէ եւ կոճէ* որչափ
ուժ ունիս եւ կ'տեսնաս ցրուեալ Հայութիւնը ողջ ամբողջ
միութեան գունդ մի կ'դառնայ . գունդ , որ երբեմն Գե-
ղեօնեան գարեղէն նկանակին պէս Մասիսին ծայրէն հոլ-
վելով՝ թշնամեաց բանակին վերայ կ'ջարդէր եւ կ'մանրէր :

Արթեմ թէ բաւական համոզուեցար , ուշադիր ընթեր-
ցող , Հայկազանց անմիաբան գաղափարները միացնելու
համար , այս դարուս փիլիսոփայութիւնը վճիռ կուտայ , թէ

* Հայաստանցոց սովորական բառ մի է իբրեւ ինչ յեռ-
հարկանել չխմոր :

միայն դաստիարակութեան եւ միօրինակ կրթութեան միջոցն է, թէ եւ կան ուրիշ շատ գլխաւոր միջոցները, բայց ամէնքն ալ գրեթէ դաստիարակութեան արգանդէն կ'ծնանին եւ նորա աղբիւրէն կ'յառաջանան միայն : Ուրեմն զարտ է նախապէս, այս բեղմնաւոր արգանդին մէջ մշտնեմք եւ այս աղբիւրին ակն դիմենք :



ՀԱՐՑՈՒՄՆ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԶՈՂՋՈՒՆՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Հարցե՛ք զողմունքս Հայաստան աշխարհին մերոյ
է- զլինովիւնէն նորա, ոյս սիրե՛ք Հայաստան :

ՀԱՅՐԵՆԻՒ՝Ք, Հայրենիք, ովքանիք աղցր է յունկս խորթացեալ մանկտոյն՝ շնաշխարհիկ քո անուն, որք ի սիրելուս լայնատարած կան գաղթեալ եւ տարամերժեալ խորալի գրկէդ որդիք փառաց եւ քաջութեան, սյրիացելոյ Հայաստանին հեռացեալ զաւակունք. քաղցր է յոյժ յիշատակ Հայրենի աշխարհին մերոյ. մանաւանդ Հայրենասիրաց աչաց, գիտեմք եւ ձեզ իսկ առաւել եւս, գաղթական Հայկազունք, զի որչափ հեռացեալ էք ի տանէն Հայրենեաց. սոյնչափ հզօրացոյն է սէր նորին ի սիրտս ձեր. եւ եթէ այսպէս, ապա ուրեմն հարցէք զողմունքն Հայրենեաց ձերոց :

Դուք նախ ճայնակցեալ հնոյն Իսրայէլի, դուք հովիւք, դուք վարդապետք, դուք Եզրասք եւ դուք շինիչք Զօրաբարէլք, հարցէք եւ լացէք զօրէն խորայելի զողմունքն Հայրենեաց, որք նստիք միայնակ մեկուսի առ Ղոսիօրիւ,

առ Կուր գետով եւ առ մինչեւ Հնդկաստանի Գանգէսիւ :

Արդեօք իստիպել գերեզարացն՝ պատասխանի՝ տա՞ք դուք հանգոյն Իսրայէլին ասելով՝ Թէ « Զխաբօ օրհնեսցուք մեք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար » : դուք օրէնագէտք եւ խորհրդականք եւ իշխանք Հայկազունք , ընդէ՞ր կախէք զձեր Ետակարան նման Իսրայէլի Ի Բաբելոնեան ուռենեաց . ո՛հ , մի Թէ չիցէ՞ ձեր քաղաք մեծաշէն , Տիգրիս , Եփրատ , գետք դրախտաբուիք , ամբարտակք բարձրաբերձք , բրգունք զարմանալիք , տաճարք երկնակամարք փոխանակ միոյ հազարք հազարաց . անդ եկայք օրհնեցէք դուք զօրհնութիւնս Տեառն , անդ լիցի՞ ձեր հանգիստ եւ անդ ձեր դադար , ձեր կեանք եւ անդ ձեր գերեզման , անդ եւ յարութիւն :

Հարցէք զողջունէ իշխանութեանց եւ պետութեանց , ո՞ իշխանք տարաշխարհիկք ի նախարարութեանց Հայկազեան , հարցէք զնախնիս ձեր , զՀայկն , զԱրամն եւ զՏիգրանն . Թէ արդեօք այդ յաւերժայազմ հսկայից հին փառք Հայաստանի՝ արդ ո՛ւր են , անցին գնացին նոքա եւ փառք ընդ նոսին , չերեւին անգամ տեղիք շիրմաց նոցին առ հողաբլուր քաղաքօք անյայտացեալք :

Հարցէք զԱրշակունեաց վեհագոյն Թագաւորութեանցն , չորեքհարիւր կուսակալութեանց եւ իշխանաւորաց . դուք որդիք առանց հայրենեաց իշխանք , առանց տոհմի իշխանաւորունք , հարցէք եւ մի մոռանայք , զաշխարհաշէն Վաղարշակ հայրենակարգ , զԱրտաշէս տիեզերակալս եւ զԻւլիսապետ ինչապա զՏրդատ , որոց ընդ շքեղ տեսիլ խայտային հրճուէին ծառք եւ ծաղկունք լայնածաւալ դաշտին Այրարատայ՝ տերեւասօսիւն զեփիւռ զյաղթական դուռս նոցին ծաղիծալ ծածանէր եւ աւետիս մատուցեալ հանուր Հայկազանց :

եթէ խումբ վաս թշնամեաց նկուռն եղեւ առաջի ոտից քա-
աջազօր գնդին Այրարատեան : Արդ ոչ գուշուր, ոչ գրօշ ,
ոչ զօրավար , ոչ յաղթական . զի հարցանէք զնախնի դիւ-
ցազանց , որոց անուան արձան յիշատակի չերեւի ի հայրենիս :

Հարցէք զողջունէ զանպարտելի զօրավարացն Հայկա-
զանց , զՍմբատս , զՍամսարականս , զՎարդանս , զՄուշեղս ,
զՎահանս , եւ զՍեպուհ ռոտանիկս եւ զընտիր ընտիր սպա-
ռազէնս , որք յարդար նախանձուն վառեալ , իսէր ազգին
հաւատոյ եւ հայրենեաց , զանձինս իւրեանց եդին դիմագը-
րաւ ընդդէմ սեւագնդին Պարսից առ ի պաշտպանել զայդ ին
Այրարատայ , զոր Գրիգոր տնկեաց , Յիսուս ջուր ետեւ
ածեցոյց :

Հարցէք զողջունէ եւ զշինութենէ պանծալոյն Անու-
թագրատունեան պերճ գահոյն . յորմէ քառասուն հազար
բազմութեամբ գաղթեալ գնացիք ի լեհաստան եւ յայլ
կողմանս աշխարհի . յուշ լիցի ձեզ մեռեալն Անի , դուք զի
զողջունէ նորին հարցանել կամիք . Անին յայնժամ էր ողջ
եւ կենդանի , մինչ իսիրտ իւր իբրեւ հոգի կրէր զթագ-
բագրատունեան . մինչ հազար եւ մէկ գմբէթք երկնահայ-
եաց տաճարաց կանգուն կային ողջ եւ ի նմա խումբք եկե-
ղեցական գասուն :

Հարցէք զշինութենէ Վաղարշապատու , Արմաւրի , Թոր-
դանայ եւ համայն աւերակացն Հայաստանի , տեղեաց քա-
ջազանց անմոռաց վայրաց , մարտախումբ դաշտաց . դաշ-
տացն ասեմ արեամբ ծաղկելոց , վայրացն ասեմ ուրանօր հայ-
րենի նուիրական նահատակք մեռան եւ մեռուցին իբրեւ քաջք
եւ լրէ ժխնդ իրք հայրենի փառաց , երկու մասամբք եւս առա-
քինի հանդիսացան յաշխարհի , յիշատակ առաքինութեան
նոցին ողջ է ի Հայրենիս եւ ինքեանք ողջ են հոգւով յերկինս :

Հարցէ՛ք, եւ յիշեցէ՛ք զողջունէ մեծամեծ նահանգա-
կան իշխանութեանց, զՎասպուրականէն, զՏարօնոյ, զԲարձր
Հայոց, զՀիրակայ, զՍիւնեաց լեռնապարիսպ աշխարհէն,
զգիւնէքեր Գողթանէն, զՀերայ եւ Զարեւանդայ. եւ զայլ
գեղաշէն գեղեցկաւան գաւառաց. ո՛հ, իցէ՛ն այժմ նոքա
ըստ առաջնոյն նախարարութեամբ, իշխանութեամբ եւ բազ-
մաթիւ ժողովրդօք պերճացեալք :

Հարցէ՛ք, ուսումնածաղիկ պատանեակք եռանդուն ու-
րօքք Հայրենեաց, յոյս եւ մխիթարութիւն նորին ապա-
գայ երջանկութեան. յիշեցէ՛ք եւ մի մոռանայք երբէք
զՀայրենիսն ձեր Հայաստան. զի այն խկէ ձեր երկիր ծնն-
դեան եւ միակ տեղի նախնի յառաջող իմութեան. անշէն
Թողիք զհայրենի տուն, չուեցիք ի պանդուխտ աշխարհ. Թէ
սիրէք զի շէն կայցէ, դարձարուք կրկին անգամ այսր, շինե-
ցէք զաւերակս, զոր քակեցին ձեռք ոխերիմ Թշնամեաց .
շինեցէ՛ք դպրոցս, խրախոյս տուէ՛ք մանկուոյն. զի տգիտու-
թեամբ անկեայն Հայաստան, կանգնեցի դարձեալ ձեօք
եւ գիտութեամբ :

Այո՛, ցանեաց զձեզ իբրեւ մշակ մայրն ձեր Հայաստան,
ո՞ գաղթական որդիք, զի առաւել պողաբեր լիջիք. դուք
բախտ Հայոց աշխոյժողի պատանեակք, ելէ՛ք զի՛ այլ յա-
պաղիք, փութացէ՛ք ի ձեր մօր գիրկ, Թող մխիթարի Թող
բերկրի բաղմամբախի՞ծ սգաւորն ի բաղմաժամանակեայ ա-
ւուրս. Դուք եւս հանգոյն ոսկեղինիկ դարուն գիմեցէ՛ք քջձա-
փափաք ողուով ի Բլազանդիոնէ եւ յԱթենայ իբրեւ նաւ շա-
հաբեր ի Հայրենեաց նաւահանգիստ հասեալք :

Որդիք Հայաստանի, որ երթալով երթայիք եւ լայիք, խու-
ճապեալք եւ հալածեալք ի հայրենամուտ Թշնամեաց, յետս
դարձէ՛ք որայիւք երջանկութեան եւ ուրախութեան :

ի մեռան, որ վարեցին զձեզ տարապարտ իբնակավայր աշխարհէն, Յագկերտ, Շապուհ, Լէնկթխուր եւ Արխաւան և Այթմիկ ժամ է շինութեան եւ կանգնելոյ զաւերակո. այժմիկ ժամ է մտանելոյ ի հայրենի երկիրն աւետեաց :

Թէ որդիք էք հայրազատ, զն իսոյն փութալ մի յապաւիւրս : Զի դուք հայրենեօք եւ հայրենիք ձեօք լիջիք երջանիկ :

Միհրդատ • Յարութիւնեան • Պարթեւեանց •
Աշակերտ • Ժ. Վ. Վարդ ալ :

ԱՏԵՆԱԿԱՆ ՃԱՌԻՆԻ ՄՐԲՈՅՆ ԻՍԱՀԱԿԱՅ
ՊԱՐԹԵՒԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ

ՀԱՆՐԻՍԱԿԱՆ ԺԱՂԱՅԻՐԻՒՄ

ԱՅՍՈՐ Հայաստանեայցս սուրբ եկեղեցին, ձեզ յանդիման կ'հանէ իւր պայծառութեան եւ հայրենի լուսաւորութեան հին պքանչելի պատկեր մի, որուն վերայ նկարուած է, խմաստութիւնը եւ թագաւորութիւնը, Եկեղեցին եւ Թագ, խաչ Բրիտանի եւ Հայկազանց սուրբ :

Զարմանալի պատկեր, որ երկնից թագաւորութեան փառքը, եւ միանգամայն աշխարհին ի միասին կ'կրէ իւր չքնաղ դէմքին վերայ : Ո՛վ է այս, գիտէք, հանդիսացեալ ժողովուրդքը, Իսահակ Պարթեւ Սուրբ. Հայրապետն է. հայրենի լուսաւորութեան եւ թագաւորութեան հզօր պաշտպան, որուն քահանայապետական գաւազան նեցուկ էր Արշակունեան խախտեալ ու խարխլած աթոռին : Որով սուրբ Գրիգորէն եւ Ներսիսէն զինի դերադոյն ըստերաւ հայրեն

նեաց Իսահակ Պարթեւն է. քայց հայրենի մանկուոյն միտքեր լուսաւորելու մասին աւելի գերազանց է քան զնոսա. մանաւանդ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ շնորհարհին վարժապետ եւ իմաստուն դաստիարակ :

Դուք այսօր վասպուրականի ժողովուրդք, կ'ոճնէք այս վեհագոյն եւ քաջ հովուապետին յիշատակը. Իսահակ հայրապետ կ'սեմ, Հայաստանի վեհ բարերար, Աստուածաշունչ գրոց հրաշարուեալ թարգմանիչ. միանգամայն Արեւ Հայաստանեայց եկեղեցւոյ, յոյս Արարատեան աշխարհին :

Որոյ արժանաւոր գովութեան զրուատիքը իմ տկար բերնէս շատ վեր է. վասն զի Խորենացիմբ պէտքէ՝ որ իւր զարմանալի գրչով ներգողէ. սքանչելի Արիւն մը պէտք է՝ որ կարողանայ ըստ արժանւոյն ճառագործել իւր ամենափրկի վարդապետը. Եղիշէմը պէտքէ՝ որ իբրեւ աղանի մնջելով, լալով, Վոկաց լեռներուն մէջ, Իսահակ, Իսահակ, կանչելով քարէ քար թաշտի. որ մէկը յիշեմ ձեզ, սրկելիք, այնպիսի ընտրեալ վեհամարտ աշակերտներ պէտք են, որպէս զի կարողանան վայելչապէս հռչակել իւրեանց ամենիմաստ հօրը գերազանցութեան ձիրքերը : Աերջապէս այն սրբազան թարգմանչաց խմբէն ի զստ, ով որ ճառէ, չէ կարող ըստ արժանւոյն անոնց անուընդ պատկեր, որով Հայաստան կ'պանծայ. անոնք միայն կարող են, որ անոնց սուրբ գերեզմանին գլուխ նստան, մէկ ձեռքով այն հող գրկելին՝ որոնց պատուական մարմին ամփոփեց, եւ միւս ձեռքով ալ անոնց գործքիլը եւ յաւերժական անուները ոսկետառիւք դրոշմեցին յաւնոնեական վերնառութեամբ. որոնց մէկուն հետը բովանդակ աշխարհս Հայոց չի համեմատիր :

Արեւ Հայաստանեայց եկեղեցւոյ անդրանիկ Աստուածաման ծնունդներն են, զոր Լուսաւորչեան մայրենի

Եկեղեցւոյ արգանդը՝ երբեմն կ' ծնանէր յաճախ . որոնց համեմատութեամբ մենք իբրեւ վիժած կ' համարուինք : Առաքինին միայն կատարեալ է եւ իւր հասակը բարձր է Երկիրքին եւ աշխարհիս առաջը : Ո՞վ իբրեւ Իսահակ Պարթեւ Եկեղեցւոյ ատենին մէջը ամէնէն բարձրահասակ առաքինութեամբ փայլեալ : Ո՞վ իբրեւ Իսահակ ոսկետառ իմաստութեամբ եւ հանճարով կատարեալ : Սեփէ Գրիգոր Լուսաւորիչ, իբրեւ Առաքեալ, իբրեւ հայր հաւատոյ, իբրեւ հոգւոց լուսատու : Բայց Սահակայ մեծութիւնն ալ կարծեմ հաւասար է նորա մեծութեան. նա իբրեւ մշակ ցանեց հաւատոյ սերմն. իսկ սա գիտութեան յորդաբուխ ջրով աճեցոյց նոյն սերմերուն բոյսերը. եւ ինքն իբրեւ հոգեբուխ գետը խաղաց Հայաստանեայց Եկեղեցւոյ հրապարակներուն մէջը. զուարթացոյց եւ ուրախացոյց Աստուծոյ քաղաքի տունիկերը : Գրիգոր իբրեւ Յիսուս՝ Աւետարանի աշակերտութեան կոչեց Հայկազանց բիւրաւոր ժողովուրդը. իսկ Իսահակ՝ սուրբ Հոգւոյն պաշտօն վարեց մինչդեռ Աստուածաշունչ գրոց Թարգմանութեամբ նոյն աշակերտեալ ժողովուրդը վերնատան ձեմարանին մէջը նոր դաստիարակեց, հայրենի գրագիտութեան եւ հրեղէն նոր սքանչելի լեզուով : Ուստի նախահաւ Գրիգորէն յետոյ՝ նորա Պարթեւական ծնունդը Իսահակ հայրապետ կ' պարծի իրաւամբ իբրեւ մտաց լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ մանկտունն :

Բայց Սահակայ վերջին տխուր յիշատակը ամէն Հայկազանց սրտերը սգով կ' պատէ . ամէնաւ աչքէն արցունքներ կ' Թ.պիւ. մինչդեռ ինքն աջ ձեռքով Քահանայապետական դաւազան, ձախովն Արշակունեան Թագը պինդ գրկելով՝ պաշտպանել կուգէ մեր անմիտ Նախարարներուն

քոնաւոր ճանկերէն : Ո՛հ, այստեղ լաւ ճանչցէք, սիրելիք,
 Խաճակայ նախատեսող եւ Աստուածանման հոգին. խորհրո-
 դակորոյս Նախարարներուն կ'յայտնէ իբրեւ մարգարէ,
 ապագայ հայրենեաց աղէտաբեր վտանգը եւ կ'կուշակէ այս-
 պէս. դուք ձեր ապստամբութեան տապարներ սրելով՝ Արշա-
 կունեան հովանաւոր ծառը կտրել կուզէք. չմտածելով
 բնաւ թէ դուք եւս ձեր ձեռքով կ'կտրուիք եւ կ'չորնայք
 նորա հետը. վասն զի այն հաստաբուն ծառը իւր արմատէն
 ինկած ժամանակ՝ ձեր մեծամեծ նախարարութեանց ճիւղեր
 օղին մէջ հաստամտ պիտի մնան առանց թագաւորութեան
 բունին. կամ խորածիգ արմատներուն. ո՞չ ապաքէն դուք
 առաւել կ'փշրիք եւ բնաջինջ կ'լինիք հայրենեաց երկրէն.
 Դիարժէ՞ք, խելակորոյս մարդիկ, որ Պարսից մարզպանի տա-
 պախառն ու կիզիչ հովանիքը ձեր իշխանութեան ճիւղեր
 կանաչ պահէ. ո՞չ, ո՞չ. ասեմ՝ ձեզ, ամէնքդ ալ շուտ կ'խամրիք
 եւ կ'չորանայք վաղվազակի :

Թող տուէք այդ յիմար առաջարկութիւնը, չսփի դրէք
 ձեր անսանձ լեզուին. այն անձը, որ Յիսուս կ'խոստովանի,
 կ'յանդգնիք իբրեւ տիրադրութ Պարսից դազանին մատնել,
 որ զԱրտաշէրն ուտելէն զկնի, զձեզ ալ պիտի ուտէ եւ
 անտերունջ մնացեալ հայրենի ժողովուրդն ալ առ ոտն կո-
 խէ ու մանրէ : Թող տուէք, այդ իմ խնամոց վերաբերեալ
 հոգեւորական գործ մի է. ես իմ՝ ակտացեալ ոչխարին
 դարման կ'տանեմ, զոր դուք անխիղճ դատողութեամբ
 առողջ դազանի մի հետ փոխել կուզէք. չգուշակելով թէ
 նորա առողջութիւնը Հայաստանին համար մահ է :

Այսպէս երանելին Խաճակը երկայնամիտ ներողամտու-
 թեան մէջը իբրեւ Յիսուս կ'հանդիսանայ եւ քարկոծել
 տալ չուզեր զիւր վիրաւորեալ Արտաշէր, զոր իբրեւ շնաց-

նալ կին հանելով Հայրապետական ատեան՝ քարկոծելու իրաւունքը կ'խնդրէին մեր Հրէամիտ փարիսեցի նախարարն երուն դասը : Նա եւ իբրեւ իմաստուն քաղաքագէտ հայրենի փառաց Թաղը պաշտպանելով՝ Եկեղեցական խումբին կարգը միմեայն ճշմարիտ եւ անդուգական հայրենասէր կ'հանդիսանայ : Հայաստանեայց հոգեւորական դասուն մէջը շատ հազուադիւտ են այն ընտիր անձինքները, որոնք Եկեղեցին եւ հայրենիքը հաւասար սիրեցին ու արեան չափ պաշտպանեցին : որոց պարագլուխ կ'համարուին Ներսէս եւ Իսահակ Պարթեւ : Բայց վերջինիս սէր եւ ներողութիւն առ մեղուցիալն՝ չափազանց է : Մանաւանդ իւր իմաստասիրութեան հոգին եւ Թարգմանութեան շնորհք իւր տմէն առաքինութեան վայելուչ պսակն է եւ ինքն միայնակ պերճախօս Հայ Ոսկեբերան Հայկական դպրութեան մէջը եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բեմին վերայ : Ինքն է միայն Քահանայապետական գաւազանին Պարթեւական վերջին շառաւիղ վերաբուսեալ Գրիգորի սուրբ արմատէն եւ դադարեալ :

Ասոր համար Թող ողբայ Հայաստանեայց Եկեղեցին, մինչդեռ Իսահակայ սուրբ հայրապետին նսեմագոյն յիշատակ երկու աղէտալի վախճան կ'բերէ իւր աչքին դիմաց. « Բարձումի իսպառ Արշակունեան Թագաւորութեան . ընդ նմին եւ Քահանայապետութիւն ի տանէն Գրիգորի » :

Ահա այսպէս մեր ապշամիտ Հայաստանը չճանչցաւ իւր վեհ բարերարները՝ շատ անգամ Աստուծոյ ընտրեալներ անդգամութեամբ մերժեց, Ներսիսին՝ մահուան բաժակ խնդուց, Իսահակն ալ իւր աթոռէն ձգեց : Երկուքն ալ աչքերնին դարձուցած խռովեալ դէմքով Հայաստանէն դուրս ելան : Ո՛հ, պիտի դառնայ Իսահակ վերադառնալ իւր

դաւաջան եւ թաղն . . . ձեռք առած : Այո՛ եթէ ինչ-
պէս խրատ կուտայ մեզ սուրբ շնորհալին, փութալք սրտի
մտօք կատարելու նախ Յիսուս միջնորդ բռնենք, որպէսզի
նոքա հաշտուին մեզ հետը, յետոյ զանոնք ալ միջնորդ բռնենք
առ Յիսուսը եւ աղաչենք, որպէս զի այնպիսի մեծ սպաստակ
ընտիր մշակները վերստին հանէ Հայաստանի հունձերուն
համար. որոնք հասունացած հաւատոյ անդաստանին մէջը,
միայն մշակներու կ'կարօտին :

Նա եւ ներկայ Հայկազանց սերունդներուն թող խրատ
լինի Արտաշիր եւ Իսահակ մերժող անխորհուրդ նախարա-
րաց հայրենակործան դէտքը. նոքա անզգամութեան ազդե-
ութեամբ՝ մեղանչեցին Աստուծոյ դէմը . Պարսկց դիւանին
մէջը իբրեւ Պիղատոսի տառանք բողոքեցին անիրաւ ներուն
տաճր յորմէ կզդուչացուցանէ Պօղոս եւ խաչ հանին Հայ-
րապետն ու Թագաւորն ի միասին. բայց, աւանդ, մեր սպա-
գայ սերունդներուն ատամունքներ առին ու թափեցան
եւ դեռ կ'թափին երկպառակութեան քարալից ազդեանքով
Այս քաջածնիս մեր նախնեաց յանցանքն է . մերն ալ կարծեմ
մեր զաւակներ պիտի քաշեն. վասն զի այժմեան մեր կերած
ազոխ աւելի թթու եւ դառն է . որով մեր ողորմելի զա-
ւակներուն մնացած ատամունքներն իսպառ պիտի խորտակէ .
հէ, Հայն իբրեւ անատամ ծերունի պիտի ապրի աշխարհիս
վերայ եւ զո՛ւրկ պիտի մնայ բարեկեցութեան հացի ճա-
շակէն :

Ուրեմի միտ ըբերելով մեր հայրենեաց անցեալ ժամա-
նակներու մէջ պատահած ազգակործան դիպումները
ղգուշութեամբ խրատենք մեր անձն. չլինի թէ , մեք որ
այսօր մեր նախնեաց անմտութիւն կ'բամբասենք , տեղի
տալք, որ ապագայ սերունդներն ալ զմեզ բամբասեն .

Խոստովանութիւնն անդգամու թիւն մէկ գեհ գնելով՝ շնորհա-
 պարտ արտով ճանչնանք մեր արդի հայրենեաց իրրեւ ճոա-
 քաղ մնացած հազուադիւտ բարերարները : Աի գուցէ
 Արշակունեան թագին արեւը ու Եկեղեցւոյ բազմապայ-
 ծառ ջահն Իսահակը ծածկուելէն յետոյ, գեա Հայոց երկըն-
 ղի մէջ մնացածը փոքրաճաճանց փալիւղ աստղիկներն ալ
 ծածկուին մեր աչքէն . վասն զի ժողովրդեան արժանա-
 ւորութեան համար Աստուած Իսահակ կուտայ եւ նորա պէտ
 տաքինի յաջորդները . բայց եւ վաղվաղակի կբառնայ
 զանոնք . մինչդեռ ժողովուրդն անարժանութեամբ կարհա-
 մարհէ եւ ազերախտութեամբ կ մերժէ Աստուծոյ ընտրու-
 եալները : Արդեհեք ու մաքրեհեք Հայրենեաց տունէն այն
 վաղեմի մնացած փոշիները . զոր Հայաստանի վաստակա-
 ւոր առաքեալները իրենց ոտքէն թօթափելով՝ խաղու-
 թեամբ դուրս ելան : Եթէ յանդգնէք միշտ Աստուծոյ ճշշ-
 մարիտ պատգամաւորները մերժել, չարախօսելով, զրպարաե-
 լով, անարգելով, արհամարհելով, այդ անիծից փոշիները ես
 առաւել պիտի թանձրացնեմք . Հայաստանի դադաթան
 վերայ : ջանադիր լինիք, ներկայ առաքինութեամբ մեր
 հայրենի աշխարհէն ջնջել այդ անարգ յիշատակները, եւ
 թէ ոչ հետզհետէ ամէն դարերու մէջը նախատանաց եւ
 կշտամբութեան կոթողներ անկեհք Հայաստանի վերայ,
 անցաւորները տեսնան ու նշովեն :

Հոգի Աստուածատիպ երանելի Խուրբ Սահակ, դու որ
 այսօր ճշմարիտ Հահանայապետին հետընկերքին վարագու-
 ղի կողմն անցած Աստուածպետական աթոռին առաջը,
 համարձակութիւն ունիս, զիտեմք, մի մոռանար, յիշէ Հայ-
 աստան ու բարեխօսէ նորա համար . այն հին թանձրացած
 փոշիները սրբել . ասէր ձգարձեալ նորա սորկացած զազա-

Թանէն. կարկառէ հայրապետական աջդ, օրհնէ, եւ քո
սիրած ազատութեան իւզը թափէ վերստին երկնից գօրու
թեան եղջիւրէն Հայաստանի խոնարհած գլխոյն վերայ,
բարձրացի կրկին, զոր կորացուցին կամակոր հոգիները:

ղեւ է. Մ. Մեսրոպեան. Արծրունի,
Ա. Ժ. վարժարանին վարագայ:

ՏԵՍԻԼ ՀԱՅԿԱԶՆ ՊԱՏԱՆՈՅ

ՄԻՆՉ հայ պատանեակն ի քունն ի յանուրջս,
Լսէր դառնագին ձայն աղէտ միմուռնջ.
Չայն՝ որ հեռի չէր ի Հայոց երկրէն,
Չայն՝ զերդ ի Հռամայ ողբումն եւ լալումն:
Չարթնոյր եւ սթափէր աշխոյժ պատանեակն,
Ծեր մի տեսանէր ալեօք սպիտակ.
Մերկ էր ի փառաց իւր հազարամեայ,
Աղքատ հնոտի կերպարանք նորա:
Ա՛հ, լայր ծերունին իբր մանուկ ի մայր,
Չանցեալն յուշ ամէր, մորմոքէր ի լալ.
Ո՛ւր են, ասէր, արդ իմ փառաց որդիք,
Ո՛հ, յօտարութեան կան տարաբախտիկ:
Ե՛րբ իցէ արդեօք, լցցի սրտիս խանդ,
Ըսւոյ զինեւ գայցեն իմ ծերութեան փառք,
Նոքօք նորոգի հոգի իմ եւ կեանք,
Այցեսցեն առ միմեանս ոսկերքս ցամաք:
Որդիք իմ ի՞նչոց ի գերկ իմ սընան,
Ձեռք անգուծ նեղչաց վարեցին ի մահ:

Անորդի կամ ես մնացեալ միայնիկ,
 Իբրու զճնձղուկ Հայրենեաց տանիք :
 Ասաց պատանին Թախծեալ ծերունւոյն,
 Դու յո՞ր երկրէ ես եւ զի՞նչ քո անուն,
 Զի՞նչ այդ աշխարումն եւ սրտի կսկիծ,
 Ասա ինձ, հայրիկ, ես քեզ կարեկից :
 Դարձաւ ծերունին, որդեակ իմ սիրուն,
 Արդ քեզ զո՞րն ասեմ ցաւս ուրոյն ուրոյն,
 Զժուժէ իմ լեզու զիմ բոլոր աղէտ,
 Քեզ ի դէմս բերել քո սրտին ի վերս :
 Ես եմ հինաւուրց պերճ այն Հայաստան,
 Մեռան ողջ փառքն իմ, ես դեռ անմահ կամ :
 Երկոցս ես անկայ, կանգնեցայ դարձեալ,
 Այլ ի վերջն անկայ, չիք կանգնելոյ ճար :
 Խորհուրդ անօրէն, խորհուրդ վատութեան,
 Խորհեցան զինէն անմիտ նախարարք :
 Զարտուշիր, Սահակ մատնեցին ի պարս,
 Գնաց Արշակունեան Թագ, այլ չէառ յիս դարձ :
 Մինչ դարձեալ Աշոտ վեհ Բագրատունին,
 Եդ ի գլուխ իմ զայն, բարձրացայ յԱնին :
 Կեանք իմ զերգ դարնան ծաղիկ ծաղկեցաւ,
 Կարծեցի Թէ այլ եւս ոչ Թառամին իմ փառք :
 Այլ վեստն այն Սարգիս, մահաշունչ խորշակ,
 Փչեալ խամրացոյց զիմ նոր մանուշակ :
 Նոր Յուդայ եղեալ՝ մատնեաց զիմ Վրկիչ,
 Արկ դուռով զԳագիկ, յունաց գառադիղ :
 Այսպէս կործանումն յինէն ինձ եհաս,
 Մինչ կանգուն կայի, ո՛հ, անկայ տապաստ :
 Որդիք՝ Թիրաղ րուժ, որդիք ապերախտ,

Ինքեանք մերժեցին հօր զլիտյն ըզթագ :
 Թագ՝ որ շուք ամէր հանուր Հայկազանց ,
 Թագ՝ որ պարիսպ էր բնդ դէմ թշնամեաց :
 Թագ՝ որ հոգի էր մարմնոյն հայրենեայ ,
 Թագ՝ որ պսակ էր իմ զլիտյս ազատ :
 Այսպէս անց իմ բախտ, ազնիւ պատանեակ,
 Այսպէս մուտ արեւն իմ կենաց պայծառ :
 Ո՛հ, կաշկանդեաց զիս մութն ըսարկութեան ,
 Վերջացաւ յինէն լոյսն ազատութեան :
 Այլ դու, Հայաստան, ծերուկ անտիրունջ ,
 Հերիք շատ հեծես հատաւ, ո՛հ, քո շուռջ :
 Սիրտ Հայոց եհար ցաւոց քո մրմունջ ,
 Չես դու մոռացեալ, դու գաս մեզ սրդ յուշ :
 Աւետիս տամ քեզ, տար տուգդ ի քէն բաց ,
 Բեզքաղցր ակնարկէ Աստուածն ի բարձանց :
 Գարուն քեզ մերձ է, ձրմեռ քո էանց ,
 Ապրիլ քեզ բերէ նոր զատիկ ծաղկանց :
 Այդ քո ցնցոտի, աղքատ կերպարանք :
 Դարձեալ պճնեցի նոր հարսի նման :
 Խորշոմեալ երեսդ, զառամեալ հասակդ ,
 Հրաշխք նորոգեալ դարձցիս ի կայտառ :
 Որ իբրու արեւ ի մուտս խոնարհեալ ,
 Բարձրացիս կրկին միջօրեան՝ կամար :
 Բո վրշտաց աւուրց դժբախտ երեկուն ,
 Փոխեցի անդրէն քեզ նոր արշալոյս :
 Այս քեզ աւետիս, Հայկազն պատանեոյս ,
 Դու համբեր սիրով եւ լեւր քաջայոյս :
 Նոր ողիք Հայոց վարժեալ ի յուսումն ,
 Ծե՛ր դու, ծրնանիս անդրէն նոր մանուկ :

Որ զքեզ կարծես զու գերեզմանին դուռն,
Դառնաս ինոր կեանս կրկին յարութիւն.
Եզեկեան հրաշիւք չող քո որ ի մուտս,
Ծագեսցի ի քեզ, Հայաստան, նոր լոյս :

Ղուկաս Եղեկ. Մ. Սարգիսեան.
Սեբաստայի. Ա. Ժ. Վ. Վարդապ.

Ի ԿԱՇՏՆ ԸԱԻԱՐԸԱՆ

Ա՛հ, Հաւարչան,
Հայոց քաջաց կարմիր տապան.
Վե՛հ վարդանանց փաղփիւնն ասողունք
Թուխ ամպերով քեզ առին խուփ.
Ի պարանոց եւ ի գլուխ
Վարդեր փայլին խիստ կարմրուկ.
Հողիկդ սիրեմ ես, Հաւարչան,
Որ ես հեձան
Քաջաց արեան :

Ա՛հ, Հաւարչան,
Հայոց քաջաց կարմիր տապան :
Ի քեզ սիրաբաց վարդ կոկոնաց,
Քաղցրիկ շրթունք, ո՛հ, առին փակ.
Ի ծոց բոյին վերջին շնչիկ
Ողորմարձակ

Աւա՛ղ, շնչեաց Հմայեակն ու Արտակ :

Ա՛հ, Հաւարչան,
Հայոց քաջաց կարմիր տապան :

Բա՛հ, երբ լցցի կարօտ իմ, ա՛հ,

Քանի չեւ է հասեալ ինձ մահ-

Այլ, դու զուարթուն, առ զիս եւ տար.

Տաք եւ հասո գաշտն յԱւարայր,

Հաղախք արեանց վեհ Դիւցազանց համբուրեցից,

Լցցի կարօտ իմ ըզձից .

Անդ կացից

Անդ մեռայց,

Զշուք Հայրենեայ անդ լացից :

Ա՛հ, Հաւարչան,

Հայոց քաջաց կարմիր տապան ,

Համբուրեցից ես խանդակաթ

Շիրիմք քաջաց, ա՛հ, մամուսպատ .

Անդ թափեցից յորդ արտասուք

Անդ զվարդան լացից ի սուգ .

Անդ իմ վեհից սուրբ ոսկերաց

Համբոյր տացից, ա՛հ, անձկայրեաց .

Անդ ըզնոցա թացից շիրիմս կարմրուկ

Որք կան պառկուկ :

Ա՛հ, Հաւարչան,

Հայոց քաջաց կարմիր տապան :

Արմեն. Թ. Խանտան.

Պանդուխտ. Ա. Ժ. Վ. Վարդապ.

Ա Ռ Ա Կ

Արտիւ է ճնճոռի

- Ճնճղուկներ երամովին
 Թռան գնացին մօտ արագիլ,
 Խնդրել իրենց ճար մի եւ տեղ,
 Որ անկասկած հանեն ձագերը:
- Դու տեղեմի ես մեր խեղճութեան,
 Թէ չունիմք մեք պատասպան.
 Շատ կը նեղէ մեզ անիրաւ
 Այն անիծեալ օձըն դաժան:
- Դու միայն յոյս ապաւէն մեր,
 Քեզի եկանք որ պաշտպանես.
 Դաւթի սաղմս քեզի կասէ,
 Ճնճղուկներուն ապաւէն ես:
- Դու, արագիլ, սուրբ եւ գթած
 Քեզ կ'պատուենք իբրեւ Աստուած.
 Քո թեւերուն վիհ հովանիք
 Թող մեզ պահէ նեղիչներէն:
- Բարունք, սիրուն ճնճղուկներ,
 Չձեզ կ'պահեմ իբրեւ ձագերս.
 Սակայն ձեզի կ'հարցընեմ
 Չինչ յոխարէն կուտաք ինձի:
- Դենացի համար միշտ կաղօթենք,
 Ի՞նչ կարենք տալ, մեք տկար ենք.
 Մեծ հատուցումն քո երախտեաց,
 Աստուած կուտայ մէկին հազար:
- Այս մասին ալ մեք կաղօթենք

Որ քու ճագեր միշտ մեզ իշխեն .
 Վեհանձն ես դուն , քո ցեղն ազնիւ ,
 Ո՛վ տի գտնեմք քեզ պէս ընտիր .
 = Եկէք բոցնիւ շուրջ թառեցէք ,
 Չագեր հանէք ու սնուցէք .
 Ձեզ չնեղէ ժամս օձին ձեռք ,
 Ձեր սիրտերուն չը լինի վէրք .
 Դու որ մեզի այս օգնու թիւնը
 Կը խոստանաս սրտիդ գթով ,
 Դու չես այլոց պէս կաշառկուր ,
 Պայծառ լինի քո վեհ անուն :
 Օձ կը սողայ դադառեկ մաղառեկ
 Կեղնէ ի ծառ ճնձղկանց բոցն .
 Չագերն ամէն կը ճըլճըվան ,
 Ո՛հ , կը կանչեն , պաշտպան , պաշտպան :
 Զայն կ տեսնէ արագիւ շուտ ,
 Կը հարկանէ օձին գլուխը .
 Բերան առած վար կ կախէ .
 Ճէլան ձէլան կ տանէ կ բերէ ,
 Տեսէք , կըսէ , ձնձղկներ ,
 Ա՞յս է կուտէ ձեր ողջ ճագերը .
 Ուրախ եղիք ձեր թշնամին ,
 Աստուած ինձ ճաշ տուեր , կուտեմ :
 Այս թող խրատ լինի ձեզ ,
 Ո՛վ ձեռնհաս հարուստներ ,
 Աղքատ մարդոց , խնայէք տարէք ,
 Անիրաւին ձեռքէն վրկէք :

Վահրամ Ղաչար . Նաչաբեան :

Աշակէր Ժ . Վ . Վարդան :

ՏՂԱՄԸ իւր հօր հետը դնաց այգեստան. տեսաւ անգմի մեղու, որ ինկած էր խոշոր սարդի ոտայնի մը մէջ. եւ սարդն բացած էր իւր սպառնալի մկրատածեւ բերանը՝ մեղուի արիւնը ծծել կ'կամէր. Փախկոսիրտ եւ զգայուն մանուկը տեսնալով մեղուին չարաչար վտանգը՝ քակեց այն չար դազանին հիւսուածքը եւ մեղուն ազատեց մահուան վտանգէն.

Տղայի հայրը տեսնալով այս դործը, հարցուց. տղաս, ինչպէս չես ւախտաւ, այսպիսի ճարտարութեամբ զեռունի մի հանձարը կոչնչացնես. դուն պէտք է սքանչանայիր անոր բնութեան ճարտարութեան վերայ, որ այնպիսի սքանչելի տեսարան մը կ'ներկայացնէ մեզ, որով փոխանակ քակելու՝ խնամք պէտք է տանելիւ անոր.

Պատասխանեց մանուկն. արդարեւ սարդի հանձարը գովելի է, բայց նենգութեան թակարկը պատրաստել էր այն ժրաջան մեղուին համար որ մեզի անուշահամ մեղր եւ Աստուծոյ տաճարին համար վառելու մամ կ'շինէ. որուն արդիւնքը հասարակաց բերան կանուշացնէ. իսկ սարդը միայն իւր փորին համար կաշխատի.

Հայր գովեց պարզամիտ մանկան արդար դատողութիւնը, որ կ'պախարակէր սարդի ամենախիտըն հանձարը, որոյ խորհուրդը ի վնաս եւ ի կորուստ էր, անձնասիրուն պատճառաւ. Բայց շարունակեց հայրը. գուցէ դու սարդին անխրաւութիւն արիր, վասն զի սա կ'պաշտպանէ մեր զեռահաս ողորդները՝ ճանձերու եւ զիծակներու երեսէն, իւր ոտայն նոցա վերայ հիւսելով.

Հարցուց մանուկը. միթէ սարդը մեր խաղողները պաշտ-

պաներու համար կ'հիւսէ իւր ուստայն. ոչ, այլ իւր արիւն արբու կոկորդը կ'շտայնելու համար :

Ուղիղ կ'դատես, առաջ հայրը , շնորհակալութիւն այլ մասին կ'վայելէր բնուէն որ գիտէ այո՛ եւ վնասակար բանը գործ դնել, լաւը եւ օգտակարը պահպանելու համար :

Ասլա հարցուց մանուկն . ինչո՞ւ համար անորդը այնպէս միայն կ'նստէ իւր ուստայնին մէջ , բայց մեղուները ընկերական կեանք կ'սիրեն եւ միաբան կաշխատին , ինչպէս որ վայել է հասարակաց .

Պատասխանեց հայրը : Լաւ խորհուրդ բարեկամութեան հիմն է . նա միայն կարող է շատերը բարեկամութեան անխըղելի շղթայով իրարու հետ կապել . Վատթարուէն եւ անձնասիրուէն հոգին միշտ իւր կ'խորհի եւ հասարակաց բարուէ դարան կ'պատրաստէ , որպէս զի յինքն գրաւէ : Ուստի կ'որոժանինա՛ որ ընկերութենէն դուրս կապրի . եւ իւր միայնութեան գործն՝ իւր համար կ'որստեան պատճառ կ'լինի : Այս խորհրդով Իմաստուն Բնութիւնը չկամեցաւ դատել այն բանը, որ մարդիկ յաճախ այնքան չար ու կորստաբեր կը տեսնան աշխարհիս վերայ . ինքեանք՝ իւրեանց թող կորուստ լինին :

Այսպէս կարող է մարդ չարէն օրինակ առնելով՝ բարի գործը չարին հետ բաղդատել եւ ճանաչել իւր նպատակն . թէ բարութեան համար ստեղծաւ . եւ ճանաչէ զինքն թէ ընկերական է , եւ իւր գործն ընկերութեան բարւոյն համար կատարէ . ինչպէս որ կ'տեսնուի միաբանասէր եւ աշխատաւոր մեղուներուն վերայ . եւ ոչ թէ սարգին նմանառանձնութեամբ ապրիլ եւ միայն գործել իւր անձին շահու համար . մանաւանդ անմեղ աշխատասէր մեղուներու խումբը իւր առանձնութեան թակարթին մէջ ձգել :

ԱՆՁՆԱՆՈՒՆԻՐ

ԳՈՐԾԱԿԱԼԻ ԸՆԿԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ .

ՊԱՆ.Պ. Մկրտիչ Տ. Ատոմեան :

ԲԱՂԷՇ.Պ. Տիգրան Կալիպոլեան Պօլսեցի :

ԲԵՐԻԱ . Յովհաննէս Աղա Բուրժլիսանլեանց :

ՄՈՒՇ. Աղա Վարդան Մամիկոնեան :

ԿԱՐԻՆ . Խաչատուր Խան Տ. Ներսիսեանց :

ՏՐԱՊԷԶՈՆ . Պ. Ստեփան Մ. Յակովբեանց :

ՊՕԼԻՍ . Ղեւոնդ Վարդապետ միաբան Վարդապ :

ՏՓԽԻ Ս. Պ. Համբարձում Էնթիադեանց հրատարակիչ Սբ. ռուկի Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն . եւ Պ .

Գարեգին Մուրադեանց :

ԳԱՆՁԱԿ.Պ. Ներսէս Աբրահամեան :

ՂԱՐԱԲԱՂ . Ընթերցարարաց Թանգարան :

ԱՂԵՔԱՆԻՐՊՕԼ . Սիմէոն Սարկաւադ Օրէնաւարց յԱրքուկի ուսումնարանին :

ՆՈՐ ՊԱՅՆՁԻՏ . Աղա Բարսեղ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ.Պ. Չաքար Տ. Յոհաննէսեան :

ՆԱԽՃՈՒԱՆ . Մ. Մկրտիչ Թունեան :

ՆԵՐՔԻՆ . Աղուլիս Ուսումնասէր Տ. Յակոբ Բահանայ Տ. Անդրեանեանց :

ԴԱՐԻՆԺ . Մատթէոս Նազարեանց եւ Յոհաննէս Շխեանց Ղարաբաղցի վաճառական ուսումնասէր Պարոնայք :

ՍԱԼԱՄԱՍ . Աղա Պատալ Արզումանեան .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻԹՈՑ :

ԱՆՀԱՄԱՁԱՅՆ ՆԻ ԱՆՄԱՐԱՆ ԳԱՂԱՓԱՐԳ ՀԱՅԿԱԶԱՆՑ :	195
ՀԱՐՑՈՒՄՆ ԳԱՂԱՓԱՆ ՀԱՅՈՑ ԶՈՂ ԶՈՒՆՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ :	205
ԱՏԵՆԱԿԱՆ ՃԱՌ ԻՏՕՒՆ ՍՐՈՏՆ ԻՍԱՀԱԿԱՑ ՊԱՐԹԵՒԻ ՀԱՅՐԱԳԵՏԻՆ ՀԱՅՈՑ :	209
ՏԵՍԻԼ ՀԱՅԿԱԶՆ ՊԱՏԱՆԻՈՑ :	216
ԻՌԱՇՆ ՇԱԽԱՐԱՆ :	219
ԱՌԱՎ ԱՐԴԻՆ Է ՃԻՃՆԻՆ :	221
ԲԱՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՄԱԹԻՒՆ :	223

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ

Ի վաճ, ի Բաղէշ, ի Մաշ, ի Կարէն, երբեք — ի՞նչ Օսմանի իսկ ընդունիցի արժանի Մեծիգի :

Իսկ Պօլս է — Տաճկաստանի աւելի չաւանդիլ երբեք արժանի չաւան ընդունիցի Մեծիգի :

Ի Ռուսաստան է — ի Պարսկաստան չորս արժանի Մանէլ :

Ճանապարհին ծախս իւր յարկի զիտ ի՞նչ :